Ավիասպասարկման ծառայության
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՄԴ-ԾՀԾՁԲ-15/2-3-5

ք. Երևան 23.05.2016թ.

ՀՀ սահմանադրական դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանի, ով գործում է ՀՀ սահմանադրական դատարանի կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից ՝՝Արմենիա Թրավել՝՝-ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին՝ մատուցել սույն պայմանագրի N1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով և տեխնիկական բնութագրով նախատեսված **Ավիասպասարկման /ավիատոմսերի վաճառքի/ ծառայություն** (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

1.2 Ծառայությունը մատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, ինչպես նաև սույն պայմանագրին համապատասխան:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունքունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ծառայության մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ՝ պահանջելով Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.4 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված N1-ի պահանջներին.

2.1.5 Պատվիրատուն պարտավոր է՝ Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.6.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ծառայության մատուցման ժամկետները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունն ընդունելու դեպքերում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունքունի՝

2.3.1 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Պատվիրատուի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատուցել Ծառայությունը:

2.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին (Ստացողին) մատուցել Ծառայությունը՝ սույն պայմանագրի N1 Հավելվածին համապատասխան և ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պատվիրատուին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ծառայության արդյունք:

2.4.3 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. Ծառայության գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածում: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1.240.000/Մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

4. Ծառայության մատուցման որակը

4.1 Կատարողը երաշխավորում է մատուցված Ծառայության արդյունքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և սույն պայմանագրի N1 Հավելվածի պահանջներին:

5. Ծառայության հանձնումը և ընդունումը

5.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցած Ծառայության արդյունքի որակի, մատուցման նախատեսված ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված մատուցման ժամկետների խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի գնի 0,05 %-ի չափով:

6.3 Սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության համար վճարման ենթակա գումարներից:

6.4 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի ընդհանուր գնի 0,5 %-ի չափով:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի

պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սահմանադրական դատարան	<<Արմենիա Թրավել>>ՍՊԸ
Հասցե՝ք. Երևան, Բաղրամյան 10	Հասցե ք. Երևան Վարդանանց 4
ՀՎՀՀ 00018357	ՀՎՀՀ 00030747
բանկ՝ՀՀ ՖՆ գործառնական հ/հ 900011179083	<<ՎՏԲ-Հայաստան բանկ>>ՓԲԸ Հ/հ 16048073241300
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությ

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

23.05.2016թ կնքված

ՄԴ-ՇՀՇՁԲ-15/2-3-5ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՎԻԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

N	Ուղղություն Անուն Ազգանուն	Չափի միավ.	Քանակ	Մեկնման օր/ժամը -	Վերադարձի օր/ժամը
1.	Երևան-Վիեննա-Կոշիցե-Վիեննա-Երևան 1հատ/բիզնես/ 2հատ/ էկոնոմ /	հատ	3	23.05.16	27.05.16

Սկիզբը	ավարտը
Չափաբաժին 1 - 23.05.16թ	27.05.16թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սահմանադրական դատարան
Հասցե՝ք. Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 00018357
բանկ՝ՀՀ ՖՆ գործառնական վարչ
հ/հ 900011179083

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արմենիա Թրավել>>ՍՊԸ
Հասցե ք. Երևան Վարդանանց 4
ՀՎՀՀ 00030747
<<ՎՏԲ-Հայաստան բանկ>>ՓԲԸ
Հ/հ 16048073241300

(ստորագրություն)

Կ.Տ.

23.05.2016թ կնքված
ՍԴ-ԾՀԾՁԲ-15/2-3-5
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում			Ընդամենը Տպի
		2-եռամսյակ	3-եռամսյակ	4-եռամսյակ	
1	Ավիաապահովման /ավիատոմսերի վաճառքի/ ծառայություններ	1.240.000	1.240.000	1.240.000	1.240.000
	Ընդամենը *				1.240.000

ՀՀ դրամ

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սահմանադրական դատարան
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 10
ՀՎՀՀ 00018357
բանկ՝ՀՀ ՖՆ գործառնական հ/հ 900011179083
Աշխատակազմի ղեկավար՝Ա.Հակոբբան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արմենիա Թրավել>>ՍՊԸ
Հասցե ք. Երևան Վարդանանց 4
ՀՎՀՀ 00030747
<< ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲԸ
Հ/հ 16048073241300

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
23.05.2016թ. կնքված
N ՍԴ-ՇՀԾՁԲ-15/2-3-5 ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող
«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ

ք.Երևան, Վարդանանց 4
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16048073241300
ՀՎՀՀ 00030747

Պատվիրատու
ՀՀ սահմանադրական դատարան
ք. Երևան, Բաղրամյան 10
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011179083
ՀՎՀՀ 00018357

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 23 »«05» 2016թ.

Պայմանագրի անվանումը՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎԻԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը՝ ՝« 23 »« 05 » 2016 թ., N ՍԴ-ՇՀԾՁԲ-15/2-3-5
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ սահմանադրական դատարանի և Կատարողը ի դեմս «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2016 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ նախատեսված՝ Պայմանագրով ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները

N	Մատակարարված ծառայությունը							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը/ ըստ վճարման ժամանակացույցի/
			պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	«բիզնես» կարգի ավիատոմս	Երևան-Վիեննա-Կոշիցե-Վիեննա-Երևան	1	1	23.05.16թ.	23.05.16թ.	530.0	
2	«Էկոնոմ» կարգի ավիատոմս	Երևան-Վիեննա-Կոշիցե-Վիեննա-Երևան	2	2	23.05.16թ.	23.05.16թ.	710.0	
	Ընդամենը			**3 հատ**			**1240.0**	**2016թ. 2-րդ եռամսյակ**

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
Տնօրեն
Հ. Գրիգորյան
Կ.Տ

Ծառայությունը ընդունեց
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Հակոբյան
Կ.Տ

Հավելված 3.1
<<23>> մայիսի 2016թ. կնքված
N ՍԴ-ՇՀԾՁԲ-15/2-3-5 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Արմենիա Թրավել+Մ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2016թ. մայիսի 23-ին կնքված N ՍԴ-ՇՀԾՁԲ-15/2-3-5 (ավիասպասարկման ծառայությունների մատուցման) գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2016թ. ----ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
Ավիասպասարկման ծառայությունների մատուցում Երևան-Վիեննա-Կոշիցե-Վիեննա-Երևան ուղղությունով	3	հատ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Տնօրեն՝ Հ. Գրիգորյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն